**600.0135.30.03.07**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մարտի 2007 թվականի № 135Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №121Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը բնական գազի բաշխման լիցենզիա տրամադրելու մասին» №56Ա որոշմամբ հաստատված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բնական գազի բաշխման № 0109 լիցենզիայի պայմանների 5.33 կետը, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» №57Ա որոշմամբ հաստատված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման № 0110 լիցենզիայի պայմանների 5.28 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 5-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գնումների կարգը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվությունների ձևերը հաստատելու մասին» №121Ա որոշմամբ հաստատված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժնով.

### «VI. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

#### 25. Գնումների կատարման այլ սկզբունքները և գործընթացը

25.1. Ընկերությունը, առանձին դեպքերում, ելնելով տվյալ գնումների առանձնահատկություններից, կարող է դիմել Հանձնաժողով՝ գնումների կատարման

համար այլ սկզբունքների և գործընթացի կիրառման համաձայնություն ստանալու համար:

25.2. Սույն կարգի 25.1 կետում սահմանված դեպքերում Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացնում այդ գնումների առանձնահատկության հիմնավորումները և դրանց կատարման սկզբունքների ու գործընթացի վերաբերյալ իր առաջարկությունները:

25.3 Հանձնաժողովը, ողջամիտ ժամկետում ուսումնասիրելով Ընկերության հիմնավորումները և առաջարկությունները, սահմանված կարգով կայացնում է համապատասխան որոշում:»:

2. Կարգի 7.2 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ գ) ենթակետով.

«գ) եթե գնման ենթակա ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ կամ լիցենզիայի առկայությամբ:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ                    Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 մարտի 2007թ.
ժամը $16^{00}$